

ՆՏԴ 82.09(430.2)

Արտասահմանյան գրականություն

ԳՅՈԹԵԻ ԿԵՐՊԱՐԸ «ՏԱՓԱՍՏԱՆԻ ԳԱՅԼԸ» ՎԵՊՈՒՄ

Միրվարդ ՄՏԵՓԱՆՅԱՆ

Բանալի բառեր` Գյոթե, Հեսսե, Հալլեր, այլաբանական նշանակություն, տափաստանի գայլ, ես-ի տարրալուծում, քայքայվող իրականություն, անհատի կոնցեպցիա, անմահություն, Ֆաուստ:

Ключевые слова: Гете, Гессе, Галлер, аллегорическое значение, степной волк, раздвоение личности, распадение реальности, концепция личности.

Keywords: Goethe, Hesse, Haller, allegorical value, Steppe Wolf, split personality, disintegration of reality, concept of individual, immortality, Faust

С. Степанян

Образ Гете в романе «Степной волк»

В романе “Степной волк” Гессе посредством аллегории передает свою связь с Гете. Концепция личности в романе Гессе представляется различными проявлениями Галлера. С участием Гете и Моцарта Галлер воплощает в себе стремление к бессмертию. Нахождение утерянной самобытности индивидуума делается возможным путем созерцания и развитием самосознания, взаимосвязью чувственного и рационального.

S. Stepanyan

Goethe’s Image in the Novel «Steppe Wolf»

Goethe allegorically expresses his connection with Goethe in the novel “Steppe Wolf” by H. Hesse. The concept of individual in Hesse’s novel is presented through different manifestations of Haller. Goethe is one of those. With the participation of Goethe and Mozart Haller conceptualizes the tendency to immortality, he makes possible retrieving the lost identity by contemplation and development of self-consciousness, by the connection of sensual and rational within the individual.

«Տափաստանի գայլը» վեպում Հեսսեն իր եւ Գյոթեի կապը ներկայացնում է այլաբանորեն: Անհատի կոնցեպցիան ներկայացվում է գլխավոր կերպարի՝ Հալլերի տարբեր դրսեւորումներով: Գյոթեն դրանցից մեկն է: Գյոթեի եւ Մոցարտի մասնակցությամբ Հալլերը գաղափարայնացնում է անմահության միտումը: Հեսսեն կորցրած ինքնության վերագտնումը հնարավոր է դարձնում հայեցողության ու ինքնագիտակցության զարգացմամբ, անհատի մեջ զգայական ու մտավոր փոխհամաձայնությամբ:

XX դարի գրականության ինքնատիպ ներկայացուցիչներից մեկի՝ Գյոթեի անվան եւ Նոբելյան մրցանակակիր, Հերման Հեսսեի (1877-1962) գաղափարական, ստեղծագործական լուրջ խնդիրներից է Գյոթե երեւոյթը: Գյոթեի հետ Հեսսեն միշտ եղել է գաղափարական պայքարի ու հարաբերությունների պարզեցման մեջ: Այդ մասին նա գրում է. «Սակայն սիրված այս բանաստեղծներից ոչ մեկը չի դարձել ինչ-որ հիմնախնդիր եւ լուրջ բարոյական ազդակ, նրանցից ոչ մեկի կարիքը ես չեմ զգացել պայքարի ու բանավեճերի ընթացքում, մինչդեռ Գյոթեի հետ մշտապես ստիպված եմ եղել մտույթի գրուցել կամ վիճարանել»(1): Այս հակասական բնութագիրը Հեսսեն առավել ցայտուն արտահայտել է իր «Տափաստանի գայլը» վեպում: Հեսսեի այս վեպը համաշխարհային գրականության «գայլապատում» (Wolfliteratur) շարքի լավագույն գործերից է: Այն լույս է տեսել 1927թ.: Վեպի շուրջ առաջին մտորումները ծագել են ավելի վաղ, ինչի մասին 1922թ. Հեսսեն գրել է «Շեղումների օրագրում»: Ավելի ուշ Հեսսեն դա անվանեց «Տափաստանի գայլի նախաքննություն», որտեղ գլխավոր կերպարը՝ ծեր արվեստագետը, կասկածի տակ է առնում իր ապրած կյանքը եւ ցանկանում նոր ուղղությամբ կողմնորոշվել:

Գյոթեի ստեղծագործության եւ «Տափաստանի գայլը» վեպի առնչություններին գերմանական գրականագիտության մեջ անդրադարձել են Էգոն Շվարցը, Հայնց Շտոլթեն, Բարբարա Քլին: Որպես դաստիարակչական վեպ այն համեմատվում է Գյոթեի «Վիլհելմ Մայստեր» երկի հետ: Այս կապը Է. Շվարցը բացահայտում է «Մոգական թատրոն» եւ «Աշտարակ» տեսարանների միջեւ: Հերմինեն եւ Մինոնը կապված են այդ գաղտնի աշխարհի հետ, ուր առկա է մարմնական եւ հոգեւոր ներդաշնակությունը:

Վեպի գլխավոր թեմաները Հեսսեն մշակել է «Ճգնաժամ» բանաստեղծությունների ժողովածուում, որտեղից եւ մեջբերումներ արել վեպում: Հեսսեն՝ Գյոթեի նման, սիրում է արծակ էջերում բանաստեղծություններ մեջբերել: Քայքայվող իրականության բնորոշ հատկանիշները Հեսսեն տեսնում է տափաստանի գայլի բնույթում: Իր բազմաշերտությամբ վեպը համադրվում է մարդկային ես-ի կառույցին: Ես-ի տարրալուծման արդյունքում Հեսսեն կարելորում է անհատի ազատությունը, հասարակության քննադատությունը եւ նոր հավանական պատերազմի զգուշացումը: Այս բազմակառուցվածքայնությունը Հեսսեն համեմատել է գայլի բնույթի հետ:

Անհատի կոնցեպցիան Հեսսեի վեպում ներկայացվում է գլխավոր կերպարի՝ Հալլերի տարբեր դրսեւորումներով, որոնք հանդես են գալիս որպես գործող կերպարներ, ինչպես օրինակ՝ Գայլը, Մոցարտը, Գյոթեն, Պաբլոն, Հերմինեն եւ այլն: Դրանցից յուրաքանչյուրն իր բնույթով կազմում է Հալլերի մի մասը: Գյոթեի եւ Մոցարտի մասնակցությամբ Հալլերը գաղափարայնացնում է անմահության միտումը: Գյոթեն խորհրդանշում է անմահությունը եւ ստեղծում հումանիստական բարձր իդեալ: Վերջինս միշտ եղել է Գյոթեի ստեղծագործության գլխավոր թեմա: Գյոթեի «Ֆաուստ»-ը եղել է այդ իդեալի զագաթնակետը: Բանաստեղծականության, երաժշտության, փիլիսոփայության մեջ գիտակ, բազմաթիվ գրքերի հեղինակ Հալլերի պրոբլեմը Մոցարտ, Գյոթե, Նիցշե երեւոյթներն են: Դա մարդկային քաղաքակրթության հավերժականության խորհուրդն է, անհատի տառապանքի հարատեւության խնդիրը, ինչն իրականությունից դուրս կոչվում է անմահության տարածություն. «*Իսկ մենք ապրում ենք այստեղ՝ հեռավոր /Աստղասառցային եթերի մեջ մեր, /Ոչ ժամանակ ենք ձանաչում, ոչ օր, /Ոչ այր ենք, ոչ կին, ոչ ջահել. ոչ ծեր:*»(2): Գյոթեն համարվում է Հալլերի ինքնաձանաչման փուլերից մեկը: Ինքնաձանաչման նպատակը, որ եղել է Ֆաուստի կենսակերպի սկզբունքը, Հալլերը դարձնում է անհատի, ազգի, ամբողջ մարդկության նպատակը. «*Մի քանի անգամ արտահայտել եմ այն կարծիքը, որ յուրաքանչյուր ազգ, անգամ յուրաքանչյուր անհատ, փոխանակ իրեն խաբելու՝ «Ով է մեղավոր» քաղաքական կեղծ հարցադրումով, պետք է մեղավորին փնտրի իր մեջ, հասկանա, թե որքանով է ինքն իր սեփական սխալների, բացթողումների եւ զեշ սովորությունների պատճառով մեղավոր պատերազմի եւ աշխարհի մնացած աղետների մեջ, որ դա միակ ձանապարհն է՝ հաջորդ հավանական պատերազմից խուսափել կարողանալու համար*»(3): Թեեւ Գյոթեի կերպարը վեպում ունի հեզնական բնույթ, բայց այն արտահայտում է Գյոթեի ոգու ազդեցությունը, ինչը միշտ զարմացրել է Հեսսեին: Գյոթեն, որի հետ նա հանդիպում է երագում, իսկ հետո՝ «Մոզական թատրոն»-ում, համբերատար ու ժպիտը դեմքին լսում է Հալլերի հանդիմանական խոսքերն իր անձի հանդեպ: Իսկ երբ Հալլերը կարողանում է հասկանալ, որ անմահները, որոնց ինքը ձգտում է նմանվել, իդեալական չեն, նա մտածում է իր եւ ժամանակակից խառնաշփոթ աշխարհի հաշտեցման մասին:

Հալլերի եւ Գյոթեի կերպարների կապը Հեսսեն հիմնավորում է որոշ առնչություններով: Առաջին՝ այս երկու հեղինակների մոտ առկա է կերպարի զարգացման նույն ռիթմը՝ ինքնահաստատում, ինքնաքննադատություն եւ ինքնաժխտում: Սա հանգեցնում է նրան, որ գրողը հրաժարվի սուբյեկտիվ նպատակներից եւ ձգտի իր ազդեցությունը տարածել աշխարհի վրա: Երկրորդ թե՛ Հեսսեն, թե՛ Գյոթեն ընդունում են մարդու էության երկակիությունը, այն արտահայտվում է երկուսի մոտ էլ հանդիպող «երկու հոգի են իմ մեջ» նախադասությամբ: Դրանով Հեսսեն զուգահեռում է Հալլերի, այսինքն՝ իր կերպարը Ֆաուստի հետ: Եսի տարրալուծման կոնցեպցիան համադրական է Ֆաուստի դրսեւորման ձեւերի հետ: Գյոթեի երկակիությամբ տառապում է նաեւ Հեսսեն. «*Մեր տափաստանի գայլը նույնպես հավատացած է, որ իր կրծքի տակ կրում է երկու հոգի (գայլ եւ մարդ) եւ գտնում, որ դրանով արդեն իր հոգում չափազանց նեղ է*»(4): «*Նա, Ֆաուստի պես կարծում է, որ երկու հոգին մեկ կրծքի համար արդեն չափազանց շատ է, նրանք պետք է կուրծքը պատռեն*»(5): Բացի այս նմանություններից Շտոլթեն Ֆաուստին եւ Հալլերին համարում է ծերացող տղամարդիկ, որոնք ապրում են ասկետիկ կեցությամբ: Իրենց անիմաստ մենակության մեջ երկուսն էլ հաղթահարում են ինքնասպանությունը: Այդ մասին Շտոլթեն գրում է. «*Մեֆիստոֆելի օգնությամբ Ֆաուստը փորձում է շրջել մարդկայնության բոլոր բնագավառները: «Տափաստանի գայլը» վեպում Հերմինեն իր վրա է վերցնում սաստանայի դերը: Թե Հալլերը, թե Ֆաուստը միստիկ ձեւով ետ են բերում տարիների բաց թողածն ու մերժվածը եւ դրանով ձեռք բերում մի նոր ամբողջական*

Կենսածել»(6): Այսպիսով Շտոլթեն վեպի ավարտը համարում է դրական զարգացման արտահայտություն:

Գյոթեի հանդեպ ունեցած բոլոր մտքերը, որ Հեսսեն վերլուծում է «Խոհ Գյոթեին» էսսեում, ներկայացվում է Հալլերի կերպարում: Անհատի ինքնահաղթահարման փորձերով ժխտվում է ինքնասպանությունը, եւ գերիրական տրամադրությունը միջնորդում է հերոսին՝ ազատվելու իր էության մեջ ուռճացող գազանային հակումներից, այստեղ՝ գայլային: Անդրադարձնալով վեպի գեղարվեստականությանը՝ թարգմանիչը նկատում է. ««Տափաստանի գայլը» վեպ է հիվանդ հասարակության եւ հիվանդ մարդու մասին: Հերոսը տառապում է մի հիվանդությամբ, որ հոգեբանության մեջ հայտնի է «երկվություն» («Ambiwalenz») անունով: Հիվանդության հիմքում դնելով մարդու եւ գազանի հակասությունը՝ Հեսսեն իր վեպին հաղորդում է ոչ միայն սոցիալական, այլեւ քաղաքական բովանդակություն՝ դարձնելով այն ուղղակի գեղարվեստական անդրադարձը դարասկզբի եվրոպական ավերիչ պատերազմների ու հեղափոխությունների: Վեպի գաղափարական շեշտադրումների առումով կարելու է նաեւ այն, որ ոչ միայն պատկերվում է հիվանդությունը, այլեւ բուժման դեղատոմս է առաջարկում, դա վեպին հաղորդում է բարոյախոսական, ինչ-որ չափով՝ դաստիարակության վեպերին բնորոշ գծեր»(7):

Ինքնակենսագրության հենքով վեպը մոտենում է Յ. Վ. Գյոթեի «Բանաստեղծություն եւ ճշմարտություն» վեպին: Գյոթեն սեփական ներաշխարհի եւ դրան առնչվող արտաքին աշխարհի հակադրությամբ փորձում է փրկել իր նուրբ ինքնատիպությունը՝ տալով դրան գեղագիտական մեծ կարելուություն, իսկ Հեսսեն անմիջականորեն դառնում է խորհրդանիշերի մի խառնուրդ, որտեղ խտացած դժգոհությունը տարրալուծվում է բոլոր ուղղություններով՝ դրանով իսկ տալով թե՛ անհատի, թե՛ հասարակության քայքայվող էությունը: Հեսսեի այս վեպը, որպես «ամենահինքնակենսագրական»՝ իր կյանքի անմիջական արտացոլմամբ, ըստ Տ. Սիմյանի, դառնում է 1920-ականների լավագույն փաստաթղթերից մեկը, «սոցիալական փաստ», որը պատկերում է ժամանակի հիվանդությունը(8): «Տափաստանի գայլը» տրակտատի հեղինակի գեղարվեստական նպատակն է մարդկային հոգու բազմակառուցվածքայնության բացահայտումը: Վերջինս, սակայն, չպետք է համարել անհատական կամ պատահական, այլ ընդունել որպես մարդուն բնությանը կապող ռեալ հանգամանք, ըստ որի՝ յուրաքանչյուր անհատի ներսում կան բազմաբնույթ ձեւավորումներ, որոնք երեւան են գալիս տարիքային տարբեր ժամանակահատվածներում՝ մեկ պարզամտորեն, մեկ ինքնաբերաբար, կամ էլ հանգամանքների մղումով: Հոգու ամբողջացումն իր մեջ պահպանում է այդ բազմիմաստությունը: Տափաստանի գայլի ներքին տարրալուծումը տեղի է ունենում այն սկզբունքով, ըստ որի՝ բարին ու չարը ոչ միայն պայմանավորված են իրարով, այլեւ կազմում են մարդկային բանականության բաղկացուցիչ մասը: Խնդիր է դառնում խորացող անձնական ձգնաժամը, որի մասին վեպի գլխավոր կերպարը՝ Հարրի Հալլերը, իր ծննդյան 50-ամյակին գրել է օրագրում: Նա 10 ամսով բնակություն է հաստատում շվեյցարական մի քաղաքում, ուր այցելել էր 25 տարի առաջ: Այստեղ նա հաղթահարել էր հոգեկան խոր անկումներ: Հալլերը մեծացել է մանր բուրժուական ընտանիքում, զբաղվում է երաժշտությամբ ու փիլիսոփայությամբ, գրում է գրքեր, դառնում է Մոցարտի, Գյոթեի լավ գիտակ, ուներ հակապատերազմական հայացքներ: Ճակատագրի հասցրած հարվածների արդյունքում կորցնում է հեղինակությունը: Փորձելով մասնագիտության մեջ գտնել իրեն՝ Հալլերը հայտնաբերում է իր մեջ աճող դժգոհության զգացումը: Նա սկսում է ճանապարհորդել, որից հետո ընթերցողը նրան գտնում է առանց մասնագիտության, առանց ընտանիքի, առանց հայրենիքի եւ միշտ ճանապարհին: Բանաստեղծության ու երաժշտության միջոցով նա վայելում է բերկրանքի գեղեցիկ պահեր, ինչը սակայն նրան չի գոհացնում: Վերագտնումի միտքը հետապնդում է նրան, ամենուր իշխող քաղաքացիական կարգ ու կանոնի մեջ տեսնում է հայտնվել կատարյալի հետքի վրա: Ցավոք, նրան չի հաջողվում գտնել այն՝ իր մեջ գոյություն ունեցող երկու հոգիների պատճառով: Եվ ապրում է որպես տափաստանի գայլ՝ երկակի գոյությամբ: Մի կողմում կրթված, նյութապես ապահով բուրժուական հայացքներով, երաժշտական, փիլիսոփայական ու գեղեցիկ մտքերի հանդեպ մեծ հետաքրքրություն ցուցաբերող անհատն է, մյուս կողմում գայլն է՝ բուրժուական հասարակարգի եւ մշակույթի հանդեպ կասկածանքով լեցուն հեղափոխականը: Մարդու եւ գայլի հակադրությամբ կողք-կողքի հայտնվում են ոգին ու բնագղը: Այս միացության մեջ նա նույնքան գիտակից է, ինչքան

որ մենակ ու կասկածամիտ: Եսի բազմաշերտությունը մղում է նրան ինքնասպանության: Երկու բեւեռների միջեւ սրված պայքարում Հարրին ընտրում է ինքնասպանությունը՝ հիշելով ավստրիացի գրող Ադալբերթ Շտիֆտերին(1805-1868), որն անբուժելի հիվանդության տառապանքներին վերջ տալու համար ածելիով կտրել էր կոկորդը: Հալլերի ինքնասպանության մղումը Հեսսեն անմիջականորեն կապում է Գյոթեի կերպարի հետ: Դա սկիզբ է առնում, երբ Հալլերը հայտնվում է մի ծանոթ պրոֆեսորի տանը եւ պատահական ծեռքն է առնում Գյոթեի նկարը, որը նա այսպես է նկարագրում. «Դա փորագրություն էր եւ ներկայացնում էր բանաստեղծ Գյոթեին, խստաբարո, հանճարեղորեն սանրված ծերունուն՝ գեղեցիկ գծված դեմքով, որի վրա ոչ հանրահայտ հրավառ աչքն էր բացակայում, ոչ պայատականությամբ թեթեւակիորեն շղարշված ողբերգականության ու մենակության տրամադրությունը, որի վրա նկարիչը առանձնահատուկ ջանքեր էր թափել: Նրան հաջողվել էր այդ դիվային ծերունուն, առանց վնաս հասցնելու նրա խորությանը, հաղորդել պրոֆեսորական կամ նույնիսկ դերասանական հանգստության ու ազնվականության ինչ-որ արտահայտություն եւ նրանից, ընդհանուր առմամբ, դուրս բերել արդարեւ գեղեցկատես, ծեր մի պարոնի, որը կարող էր գարդարել ուզած բյուրգերական տուն»(9): Բայց նկարիչ Հալլերին, ի դեմս Հեսսեի, լքում է Գյոթեի հանդեպ ունեցած վանումը, եւ նա գայրանում է առաջին իսկ տպավորությունից. «Ինչպիսին էլ այն լիներ, ծեր Գյոթեի այդ մեծամիտ ու ինքնագոհ նկարը, ամեն դեպքում, ուղղակի ճչում էր իմ դեմքին իբրեւ տիաճ աններդաշնակություն, իսկ ես արդեն բավականաչափ գրգռված էի ու լցված, որ այստեղ իմ գտնվելը թյուրիմացություն է»(10): Հալլերի մտորումները շարունակվում են երազի մեջ, նա գրուցում է Գյոթեի հետ՝ անվանելով նրան Նորին Գերագանցություն եւ որին նա այս ձեւով կպատկերեր. «Այնտեղ կանգնած էր ծեր Գյոթեն՝ փոքրամարմին ու շատ խստաբարո, եւ դասականի իր կրծքին, իրոք, ուներ հաստ շքանշան՝ աստղ: Թվում է, թե նա շարունակում է իր վայմարյան թանգարանից նախկինի պես վերահսկել աշխարհը, նախկինի պես ընդունելություններ տալ, նախկինի պես կառավարել: Քանզի հագիվ ինձ տեսած, ծեր ագռավի պես օրորեց գլուխը եւ հանդիսավոր ասաց.-Դե, երիտասարդներ, դուք, ինչպես երեւում է, այնքան էլ համամիտ չեք մեզ եւ մեր ջանքերին:- Միանգամայն ճիշտ է.-ասացի ես՝սառչելով նախարարական նրա հայացքից: - Մենք՝երիտասարդներս իրականում համաձայն չենք Ձեզ հետ՝ ծեր պարոնիդ: Մեր կարծիքով՝ Դուք շատ հանդիսավոր եք, Ձերդ Գերագանցություն, շատ սնափառ ու գոռոզ եւ չափից դուրս ոչ անկեղծ: Սա թերեւս ամենակարեւորն է՝ չափից դուրս ոչ անկեղծ»(11): Գյոթեի նմանատիպ դիմանկար ներկայացրել է նաեւ Կաֆկան. «Փետրվարի 4...Գյոթեի գեղեցիկ ուրվանկարը՝ ամբողջ հասակով մեկ: Բայց մարդկային այդ կատարյալ մարմնի տեսքից ստանում ես նաեւ հակակրանքի տպավորություն, քանզի կատարելության այդ աստիճանին հասնելը, թվում է, աներեւակայելի, սոսկ հորինված ու պատահական: Ուղիղ կեցվածք, ցած թողած ծեռքեր, նուրբ պարանոց, ծնկի ծալվածք...»(12): Հալլերի միջոցով Հեսսեն աստճանաբար մոտենում է իմաստուն Գյոթեին, որը սովորեցնում է հասկանալ ու ճիշտ գնահատել անմահության գաղափարը. «Պատանյակ իմ, դու շատ լուրջ ես ընդունում ծերունի Գյոթեին: Ծեր մարդկանց, ովքեր արդեն մահացել են, չպետք է լուրջ ընդունել, այլապես անարդարացի կվարվեն նրանց հետ: Մենք՝ անմահներս, չենք սիրում, երբ մարդիկ լրջանում են, մենք սիրում ենք կատակը: Լրջությունը, պատանյակ իմ, ժամանակի գործն է: Այն ծնվում է, ասեմ քեզ, ժամանակը գերազնահատելիս: Ես էլ մի ժամանակ գերազնահատում էի ժամանակը, այդ նպատակով ուզում եմ ապրել հարյուր տարի: Հավերժության մեջ, սակայն, հասկանում ես, ժամանակ չկա, հավերժությունը սոսկ մի ակնթարթ է, որը բավական է հենց մի կատակի համար»(13):

Իր որոշման բարձրակետում Հալլերին փրկում է կուրտիզանուհի Հերմինեի հետ հանդիպումը: Կնոջ օգնությամբ ողբերգականի հաղթահարումը Գյոթեի կերտվածքի առանձնահատկություններից է: Հերմինեն Գյոթեի Նատալյայի («Վիլիելմ Մայստեր») վերատիպն է, նա Հալլերին սովորեցնում է ծիծաղել, ապրել նոր ռիթմերով: Հալլերի եւ Հերմինեի՝ մեկը մյուսին լրացնող կապը կանգնեցնում է նրանց նույն ճանապարհին: Դա Աստծու ճանապարհն է, որ ձգվում է մարդու հոգու միջով: Այս հանգստությանն են ձգտում Հեսսեի հերոսները: Տափաստանի գայլը Հարրի Հալլերն է, որի կերպարը ներկայացնում է գայլի եւ մարդու խառնուրդ: Արդյունքում նրան վիճակվում է տառապել, որից ազատվելու համար նա փորձում է ծիծաղել, դրանով իսկ մոտենալ անմահներին.«Օրերից մի օր ես կսովորեմ ծիծաղել:Ինձ էր սպասում Պարլուն: Մոցարտն սպասում էր ինձ» (14): Ըստ Հեսսեի՝

Հալլերի մեկամաղձության պատճառ է դարձել այն, որ «*Նա սիրալիր, խիստ ու շատ բարեպաշտ ծնողների ու ուսուցիչների կողմից դաստիարակվել է այն ոգով, որ կամազրկումը դարձնում է դաստիարակության հիմք: Անձի ինքնառջնչացման փոխարեն նրան հաջողվել է իր Ես-ը առել, (15):* Անմահներին հասնելու հույսով ապրող Հեսսեն Նիցշեի Գերմարդն է: Իսկ մարմնի ստրկացումից ազատվելու համար Հեսսեն դիմում է էրոտիկային եւ թմրանյութերի օգտագործմանը: Այսպես ստեղծվում է արտաքին ու ներքին ներդաշնակության անվերջանալի հակադրությունը: Հումորի երեւակայական աշխարհով բնորոշվում է միակ գերիշխող աշխարհը, որը սովորեցնում է ծիծաղել, եւ որտեղ աստվածներն են շրջում: Դրա համար Հեսսեն դիմում է մոգական թատրոնի օգնությանը: Թե՛ Գյոթեն, թե՛ Հեսսեն բարձր են դասել թատրոնի դերը անհատի էության ձեւավորման մեջ, ինչի կարեւորության մասին Շտեֆան Բոյերը գրում է, «*Թատրոնն ի գորու է հիմնովին վերափոխելու գերմանացիների եւ դրանով միջնորդավորված, նաեւ մարդկության ապագան*»(16):

Մարդկային հոգու բազմակառուցվածքայնությունը եւ Ես-ի տարրալուծման՝ այսպես ասած «դիսոցիացիայի» խնդիրը նույնանում է Գյոթեի եւ Ֆաուստի սկեպտիցիզմի հետ: Ֆաուստին եւ Հալլերին միավորում է նրանց անցած ուղին: Այն լեցուն է գայթակղություններով, բախումներով, իմացությամբ, փորձություններով: Նրանց ընդհանրացնող լուծումը հրաշքն է, որին ներկա եղան եւ՝ Ֆաուստը, եւ Հալլերը; Հեսսեն ակնարկում է Ֆաուստի վերակերպավորումը. «*Եվ, այնուհանդերձ, այն ժամանակներից հետո, հիմա, նա ծերացել էր հարյուրավոր տարիներով, զբաղվել էր երաժշտությամբ եւ փիլիսոփայությամբ ու հագեցել դրանցից, ...հանդիպել էր Գյոթեին ու Մոցարտին....*»(17):

Գրականություն

1. Հեսսե, Խոս Գյոթեի մասին, էջ 59:
2. Հեսսե Հ., Տափաստանի գայլը, Ե., «Նաիրի», 2003: (Այսուհետեւ՝ Հեսսե Հ., Տափաստանի գայլը): էջ 158:
3. Նույն տեղում, էջ 118-119:
4. Նույն տեղում, էջ 61:
5. Նույն տեղում, էջ 62:
6. Stolte H. Hermann Hesse Weltscheu und Lebensliebe, Hansa Verlag, S.196.
7. Հեսսե Հ., Տափաստանի գայլը, էջ 226:
8. Տես՝ Սիմյան Ս., 1918-1939 թթ. գերմանական վեպի գաղափարագեղարվեստական պրոբլեմատիկան, Ե., Հելինակային հրատարակություն, 2015, 612 էջ:
9. Հեսսե Հ., Տափաստանի գայլը, էջ 81:
10. Նույն տեղում, էջ 81-82:
11. Նույն տեղում, էջ 96:
12. Կաֆկա Ֆ., Օրագրեր, Ե., «Ապոլոն», 2004, էջ 88:
13. Հեսսե Հ., Տափաստանի գայլը, էջ 99-100:
14. Նույն տեղում, էջ 221:
15. Stephan I., Vielfalt der Prosa, Stua` Deutsche Literaturgeschichte von den Anfängen bis zur Gegenwart, 8. Auflage, Verlag-Metzlar, Stuttgart-Weimar, 2013, S. 416.
16. Բոյերն Շ., Ազգի խարիզման, «Արտասահմանյան գրականություն», 2004, թիվ 3, էջ 182:
17. Հեսսե Հ., Տափաստանի գայլը, էջ 211:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Միրվարդ Ստեփանյան -ԱրՊՀ գերմաներեն եւ ֆրանսերեն լեզուների ամբիոն
E-mail: sirasuhi@rambler.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.թ. Է.Ա. Հայրապետյանը: